**«ՀԱԷԿ» ՓԲԸԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ**
**««ՀԱԷԿ» ՓԲԸԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020Թ. ՊԱՐՏԱԴԻՐՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆՀԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԱՆՑԿԱՑՈՒՄ»ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐN 03/21

**«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-21/20»**

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԸԲ) 03/21 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«____» ________ 20 թ

ք.Մեծամոր «31» մարտ 2020թ.

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**, իդեմսզլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է«ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից, և**«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի**,իդեմստնօրենՄիքայել Վանյանի, որըգործումէ«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **««ՀԱԷԿ» ՓԲԸաշխատակիցների 2020թ. Պարտադիրպարբերականբժշկականզննություններիանցկացում»**ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ ևպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորեխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **13441000 (տասներեք միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3) Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում(այդ թվում ծառայության վաղաժամկետ մատուցման դեպքում):

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվե միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«ՀԱԷԿ» ՓԲԸ** | **«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ** |
| 0910, ք. Մեծամոր, Արմավիրիմարզ, | ք. Մեծամոր, 2-րդթաղ. 24ա, |
| Հ/Հ 193000199200100 | Հ/Հ 193052965640100, |
| «ԿոնվերսԲանկ»ՓԲԸ, ք. Երևան, | «Կոնվերսբանկ» ՓԲԸ,ք.Մեծամոր |
| ՀՎՀՀ 04401874, | ՀՎՀՀ 04418902, |
| **Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69, | **Հեռ.**՝ 0237-3-34-34, |
| **Հեռ.**՝ 010-20-04-91 | **E-mail**:mmc_am@mail.ru |
| **E-mail**: anpp@anpp.am | |
| ........................**Մ. Վարդանյան** | ........................**Մ. Վանյան** |
| Կ.Տ | Կ.Տ |

*ԱնհրաժեշտությանդեպքումպայմանագրումկարողենկատարվելՀՀօրենսդրությանըչհակասողլրացումներ:*

Հավելված N 1
«31» մարտ 2020թ.-ին կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-21/20» ծածկագրով
N 03/21 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը** |
| 1 | 85121100 | «ՀԱԷԿ»ՓԲԸ-իառանձնապեսվնասակարպայմաններումաշխատողաշխատակիցների համարանհրաժեշտ է անցկացնել հետևյալբժշկականզննությունները.<br>1. Արյանընդհանուրանալիզլեյկոֆորմուլայով 830 մարդ<br>2. Գլյուկոզայիախտորոշում 45 մարդ<br>3. Խոլեստերինի ախտորոշում 45 մարդ<br>4. Մեզիախտորոշում 30մարդ<br>5. Սոնոգրաֆիա` որովայնի օրգանների 30 մարդ<br>6. Սոնոգրաֆիա` փոր կոնքի օրգանների 20 մարդ<br>7. Սոնոգրաֆիա` վահանաձև գեղձի 20 մարդ<br>8. Թերապևտիզննում 830 մարդ<br>9. Ֆլյուրոգրաֆիա 830 մարդ<br>10. Նյարդաբանիզննում830մարդ<br>11. Մաշկայինբժշկիզննում830մարդ<br>12. Ակնաբուժիզննում830մարդ<br>13. ՔԿԱ (ЛОР)բժշկիզննում830մարդ<br>14. Գինեկոլոգիզննում 140 մարդ<br>15. Էլեկտրոսրտագրություն830 մարդ<br>Բուժզննումը պետք է անցկացնել համաձայն կից Հավելված 1.1-ի:<br><u>Կատարողը յուրաքանչյուր աշխատակցի բուժզննման տվյալները (պատասխանը) պետք է լրացնի աշխատակցի ամբուլատոր բժշկական *քարտում, նախկին բուժզննումների հետ համեմատական անցկացնելու և պատմությունը պահպանելու նպատակով:</u><br>Բուժ զննումը անցկացվելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի վարչական տարածքի բուժ սենյակներում Կատարողի **տեխնիկական միջոցներով և աշխատանքային ռեսուրսներով**:<br>*Քարտերը գտնվում և պահպանվում են <u>«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում:</u> | դրամ | **13441000** | համաձայն կից Հավելված 1.1-ի | «ՀԱԷԿ» ՓԲԸ | 2020թ մայիսի 1-ից հաշված 60 (վաթսուն) օրացուցային օրում կամ մուտքի թույլտվություն ստանալու օրվանից **60 (վաթսուն) օրացուցային օրում** |

1. Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցելուց 40 օր առաջ, Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր` թույլտվություն (մուտքի անցագրի) ստանալու համար:

1.1 Պատվիրատուի կողմից թույլտվությունը տրամադրվում է լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության №744 առ. 09.06.2005 Որոշման:

2. Մրցույթի մասնակիցը պետք է ունենա ԱՆ-ի կողմից տրված **արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման** համապատասխան տեսակի լիցենզիա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| **«ՀԱԷԿ» ՓԲԸ** | **«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ** |
| ------------------------------ **Մ. Վարդանյան** | ------------------------------ **Մ. Վանյան** |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1.1

**«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների 2020թ. պարբերական բժշկական քննությունների համար նեղ մասնագետների աշխատանքի ծավալները, տեխնիկական բնութագրերը, անհրաժեշտ լաբորատոր քննությունները, գործիքները և սարքավորումները**

| h/h | Նեղ մասնագետների և ծառայության անվանումը | Աշխատանքի ծավալները և տեխնիկական բնութագրերը | Անհրաժեշտ գործիքները և ում կողմից է տրվում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Թերապևտ (հանձնաժողովի նախագահ) | ՀԱԷԿ-ի աշխատակիցների մանրամասն զննում, անամնեզի հավաքում,ճնշաչափում, թոքերի սրտի աշխատանքի ստուգում, գրանցում հիվանդության պատմագրում: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ, եթե կան հակացուցումներ տվյալ արտադրամասում աշխատելու համար, գրել տեղափոխման կամ աշխատանքից հանելու համար բժշկական եզրակացության ակտ, որը տրվում է պոլիկլինիկայի կողմից տնօրենի կլոր կնիքով: Պարբերական բժշկական քննությունների ավարտից հետո համաձայն ՀՀ Կառավարության 15.07.2004թ. N 1089-Ն որոշման եզրափակիչ ակտի ձևակերպում: | 1. Ճնշաչափ<br>2. Լսափող<br>Տրվում է կատարողի կողմից. | Ակտը համաձայնեցվում է ՀԱԷԿ-ի ԲՊԲ վարիչի հետ. |
| 2 | Ակնաբույժ | Տեսողության սրության ստուգում Սիվցևի աղյուսակով, աչքի հատակի ստուգում, ոսպնյակի վիճակի նկարագրություն կատառակտայի վերաբերյալ: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ խորհրդատվություն: | ՀԱԷԿ-ում ԲՊԲ Սիվցևի աղյուսակը և լինզաների հավաքածու կա: կատարողի կողմից պետք է բերվի օֆթալմոսկոպ (շարժական) և աչքի հատակի ճնշման չափման հարմարանքները: | |
| 3 | Քիթ-կոկորդ ականջաբան | Քթի խոռոչի, քթանցքի զննում, ականջի հայելիներով զննում, խորհրդատվություն: | 1. Քթի հայելիներ<br>2. Ականջի հայելիներ<br>3. Շպադելներ.<br>(տրվում է կատարողի կողմից): | |
| 4 | Նյարդաբան | Աշխատակցի արտաքին զննում, դեֆորմացիաների նկարագրություն, ռեֆլեքսների ստուգում: Հիվանդությունների հայտնաբերման ժամանակ խորհրդատվություն: | Նևրոլոգիական մրճիկ (տրվում է կատարողի կողմից): | |
| 5 | Մաշկա-վեներոլոգ | Մաշկի և տեսանելի լորձաթաղանթների արտաքին զննում մաշկային հիվանդությունների հայտնաբերման համար: Անկային հիվանդություն հայտնաբերելիս կատարել աշխատանքի թույլտվության վերաբերյալ գրառում և տեղափոխման ակտ կազմել հսկվող զոնանայից տեղափոխելու համար | ___ | |
| 6 | Լաբորատոր քննություններ | ա) Արյան ընդհանուր քննություն լեյկոֆորմուլայով, տրոմբոցիտներով: Անհրաժեշտության ժամանակ արյան մեջ շաքարի որոշում, խոլեստերենի և "C' ռեակտիվ սպիտի որոշում: | 1. Միկրոսկոպ 1 հատ<br>2. Առարկայական ապակիներ.<br>3. Ներկանյութեր, ռեակտիվներ արյան և մեզի քննության համար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բ) Մեզի ընդհանուր քննություն – անհրաժեշտության ժամանակ: | (բերվում է կատարողի կողմից): | |
| 7 | Ֆլյուրոգրաֆիա | ա) Ռենգեն տեխնիկի կողմից ֆլյուրոգրաֆիկ նկարահանում, ժապավենի վերծանում ռեակտիվներով:<br><br>բ) Ռենգենոլոգի կողմից ժապավենների զննում նեգատոսկոպով (պոլիկլինիկայում) և եզրակացության գրառում հիվանդի հիվանդության պատմագրում: | 1.Ֆլյուրոգրաֆիայի ապարատ<br>2.Ֆլյուրոգրաֆիկ ժապավեն<br>3 Երևակիչ (проявитель).<br>4.Փոշեքիմիկատ (ֆիքսաժ)<br>(բերվում է<br>կատարողի կողմից). | |
| 8 | Էլեկտրոսրտագրություն | Բուժքրոջ կողմից կատարվում է Էլեկտրոսրտագրություն. Եզրակացությունը տրվում է թերապևտի կողմից: | Էլեկտրոսրտագրիչ<br>Ապարատ և համապատասխան քանակության ժապավեն<br>(880հատ)<br>(բերվում է<br>կատարողի կողմից) | |
| 9 | Ուլտրաձայնային հետազոտություն | Կատարվում է ուլտրաձայնային հետազոտող բժշկի կողմից որովայնի օրգանների, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի հետազոտում: | Ուլտրաձայնային ապարատ<br>(բերվում է կատարողի կողմից): | |
| 10 | Գինեկոլոգ | Կանանց ներքին զննում, խորհրդատվություն, անհրաժեշտության ժամանակ՝ ուղեգրում սոնոգրաֆիկ հետազոտության | Զննման համար համապատասխան գործիքներ և ձեռնոցներ (բերվում է կատարողի կողմից): | |
| 11 | վիրաբույժ | Աշխատակցի արտաքին զննում, վերջույթների ամբողջականության նկարագրում: Հիվանդության հայտնաբերման ժամանակ ուղղորդում համապատասխան կլինիկաներ, խորհրդատվության: | | |

Հավելված N 2
«31» մարտ 2020թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-21/20» ծածկագրով
N 03/21պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 85121100 | «ՀԱԷԿ» ՓԲԸաշխատակիցների 2020թ. Պարտադիրպարբերականբժշկականզննություններիանցկացում: | | | | | 6720500 | 13441000 | 13441000 | 13441000 | 13441000 | 13441000 | 13441000 | 13441000 | **13441000** |
| 1.1 | | Արյանընդհանուրախտորոշումեյկո ֆորմուլայով: | | | | | 1245000 | 2075000 | 2075000 | 2075000 | 2075000 | 2075000 | 2075000 | 2075000 | **2075000** |
| 1.2 | | Գլյուկոզայիախտորոշում | | | | | 29250 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | **45000** |
| 1.3 | | Խոլեստերինիախտորոշում | | | | | 22500 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | **45000** |
| 1.4 | | Մեզիախտորոշում | | | | | 30000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | **60000** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.5 | | Սոնոգրաֆիա՝ որովայնի օրգանների | | | | | 90000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | 180000 | **180000** |
| 1.6 | | Սոնոգրաֆիա՝ փոր կոնքի օրգանների | | | | | 40000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | **80000** |
| 1.7 | | Սոնոգրաֆիա՝ վահանաձև գեղձի | | | | | 40000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | 80000 | **80000** |
| 1.8 | | Թերապևտի զննում (կոնսուլտացիա) | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |
| 1.9 | | Ֆլյուորոգրաֆիա | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |
| 1.10 | | Նյարդաբանի զննում (կոնսուլտացիա) | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |
| 1.11 | | Մաշկավեներոլոգի զննում (կոնսուլտացիա) | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |
| 1.12 | | Ակնաբուժի զննում (կոնսուլտացիա) | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |
| 1.13 | | ԲԿԱ (ЛОР) բժշկի զննում (կոնսուլտացիա) | | | | | 747000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | 1494000 | **1494000** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.14 | | Գինեկոլոգի զննում (կոնսուլտացիա) | | | | | 126000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | **252000** |
| 1.15 | | Էլեկտրոսրտագրություն | | | | | 830500 | 1660000 | 1660000 | 1660000 | 1660000 | 1660000 | 1660000 | 1660000 | **1660000** |

** *հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

1. Սույն բնութագիր-ժամանակացույցով ներկայացված ծառայությունը բաղկացած է 1 /մեկ/ չափաբաժնից:
2. Մրցույթի մասնակիցը իր կողմից ներկայացրած գնային առաջարկին կից պետք է ներկայացնի պահանջվող բժշկական զննությունների գները առանձին-առանձին, որոնց հանրագումարը կլինի հավասար 1 /մեկ/ չափաբաժնի գնին:
3. Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Կատարողի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատուցված ծառայությունների դեպքում) 30 օրացուցային օրվա ընթացքում:
4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ծառայության ձեռքբերման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության № 1089-Ն առ 15.06.2004թ Որոշումը, ուստի նրանով սահմանված պայմանների փոփոխման, կամ այլ պայմանների ի հայտ գալու դեպքում, որի արդյունքում հիշյալ ծառայության պահանջը կվերանա՝ Պատվիրատուն Կատարողին կտեղեկացնի պայմանագիրը լուծելու մասին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

------------------------- Մ. Վարդանյան

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ**

------------------------- Մ. Վանյան

Կ.Տ